ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2023 թվականի հուլիսի 17-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/28»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 13.07.2023թ.-ին, 14.07.2023թ.-ին և 15.07.2023թ.-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 17.07.2023թ. տրամադրված պարզաբանումները՝

1. <u>Հարցադրում</u>

«Հարգելի՛ մրցութային հանձնաժողով, խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք առաջին չափաբաժնով պահանջվող նոթբուքի էկրանի բնութագրերում նշված 120Հց հաճախականությունը վրիպակ է, քանի որ խաղային և գրաֆիկական աշխատանքների համար նախատեսված նոթբուքերից բացի մնացած բոլորի էկրանը լինում է 60 Հց հաճախականությամբ, և նշված մյուս բնութագրերից պարզ է, որ պահանջվողը ոչ թե խաղային կամ գրաֆիկական աշխատանքների համար նախատեսված մոդել է, այլ գրասենյակային աշխատանքների մոդել: Հաշվի առնելով, որ USB 2.0 տեսակի բնիկը արդեն բավական հին է, և արտադրողները այլևս գրեթե չեն օգտագործում, խնդրում ենք տեղեկացնել ընդունելի է արդյոք ավելի արագագործ USB Type-C 5Gbps բնիկով տարբերակները:»

<u>Պարզաբանում</u>

«Առաջին չափաբաժնով պահանջվող դյուրակիր համակարգիչների էկրանի բնութագրում նշված «առնվազն 120 Hz» տեխնիկական վրիպակ չէ:
Առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:»

2. <u>Հարցադրում</u>

«Հարգելի գործընկեր, խնդրում եմ հստակեցնել, քանի որ սքանավորման արագությունը հիմնականում ընդունված է չափել նկար/ րոպեում (ipm), ոչ թե էջ/րոպեում (ppm), խնդրում ենք պարզաբանել, ընդունելի է արդյոք սքանավորման արագությունը՝ առնվազն 25 նկար/ րոպե (ipm) մոնոխրոմ և գունավոր երկկողմանի սքանավորման դեպքում: Խնդրում ենք պարզաբանել նաև, ընդունելի է արդյոք պրոցեսորի արագությունը 1200MHz-ի փոխարեն 2x800MHz արագությունը, որը ավելի արագագործ է ստացվում:»

<u>Պարզաբանում</u>

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/28» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է բազմաֆունկցիոնալ լազերային սարքի տեխնիկական բնութագիրը: Առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին:»

3. Հարցադրում

«Հարգելի պատվիրատու, խնդրում ենք պարզաբանել՝ 1. 2-րդ չափաբաժնի բազմաֆունկցիոնալ սարքի տեխնիկական բնութագրում նշված պարամետրը՝ սկանավորման արագությունը առնվազն 25էջ/ր ընդունելի՞ է դիտարկել որպես պահանջ Letter ձևաչափի համար, քանի որ շատ արտադրողների մոտ նշվում է 25էջ/ր՝ Letter, 24էջ/ր՝A4: 2. Ինչ նկատի ունեք "քարթրիջ՝ 1 հատ" պահանջը նշելով՝ սարքի մեջ 1 հատ գործարանային տոներային քարթրիջի առկայությու՞ն:»

Պարզաբանում

«1. Բազմաֆունկցիոնալ լազերային սարքի տեխնիկական բնութագրում պարամետրերը նշված կամ դիտարկված են A4 ֆորմատի համար:

2. Բազմաֆունկցիոնալ լազերային սարքի տեխնիկական բնութագրում նշված «քարթրիջ՝ 1 հատ» պահանջը նշանակում է՝ 1 հատ բազմաֆունկցիոնալ լազերային սարքի մեջ 1 հատ քարթրիջ, բնութագրում նշված է նաև «լրացուցիչ քարթրիջ, ռեսուրսը՝ առնվազն 3000 էջ», որը ևս պետք է լինի գործարանային փաթեթավորմամբ:»

4. Հարցադրում

«Հարգելի պատվիրատու, հրավերով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը նշված 30 օրացույցային օրը և պայմանագրի նախագծում նախատեսվում է նաև մատակարարման ժամկետը ևս 30 օրով ավելացնելու հնարավորություն: Խնդրում ենք պարզաբանել, կարել է վստահ լինե՞լ, որ ապրանքների մատակարարման համար կտրամադրվի գոնե 60 օրացույցային օր ժամկետ:»

Պարզաբանում

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/28 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով ապրանքների մատակարարման ժամկետը սահմանված է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օր: Ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման պայմանները սահմանված են պայմանագրի նախագծի 8.8 կետով: Ապրանքի մատակարարման ժամկետի երկարաձգման վերաբերյալ վաճառողի առաջարկությունը գնորդի կողմից կքննարկվի՝ ապրանքի մատակարարման փուլում պայմանագրով սահմանված ժամկետում ապրանքի մատակարարման անհնարինության վերաբերյալ հիմնավոր պատճառաբանություններ ներկայացվելու դեպքում՝ պահպանելով պայմանագրի նախագծի 8.8 կետով սահմանված պայմանները:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/28» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արուս Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010 511-787:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@mail.ru:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/28» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: